էր գավառում ուժեղ և կանոնավորված կենտրոնավայր ունենալու անհրաժեշտությունը։ Այդ կարիքին բավարարություն տալու կոչված էր Գորիս քաղաքը, որի հիմնադրությունը տեղացիք վերագրում են Կարաև գավառապետի նախաձեռնությանը։

Պատմում են, որ գավառի համար հարմար կենտրոն ստեղծելու մտքով տարված՝ Կարաևը մերձավոր պաշտոնյաների և վստահություն վայելող կալվածատերերի ու առևտրականների ուղեկցությամբ. մի մեծ ձիավոր խմբով շրջել է հատուկ այդ նպատակով գավառի զանազան կողմերը և այցելած վայրերից ոչ մեկը չի հավանել։ Վերադառնալիս ուշ գիշերով խումբը հասնում է Գորիս գյուղը։ Ձիավորների աչքի առջև բացվում էր գյուղի առջև գետակի աջ ափին փռվող հարթությունը, որը նիրհում էր իր մեղմ սարալանջերի մեջ լրիվ լուսնի թանձր շողերով ողողված։ Այս հրապարակի վրա ուրբաթ օրվա տոնավաճառներին հավաքվում էին շրջակա գյուղերից և հեռավոր վայրերից, նույնիսկ Նախիջևանից, Շուշուց, Մեղրուց եկած ուղտերի, ձիերի, ջորիների քարավանները բրդի, բոժոժի, կաշվի հակերով, պտուղների fթoցնէրավ, Մոսկվայի ապրանքների կապոցներով, ծախու անասունով. արհեստավորները դուրս էին բերում իրենց կարած փափախները, կոշիկները, թամքերը, այս ու այնտեղ սարքվում էին գյուղական դալլաfնէրը։ Գավառապետը և նրան ուղեկցող ձիավորները հիացած կանգ են առնում այս հրապարակի առջև, որտեղ արդեն հատ-հատ սկսել էին կառուցվել առանձին տներ, խանութներ, արհեստանոցներ։ Տեղնուտեղը միաձայն որոշվում է քաղաքը այդտեղ հիմնել։

Սակայն հիմնելիք քաղաքի համար վայրի ընտրության հարցում կրկին Գորիսին առաջնություն տալը բացատրվում է ոչ թե «լուսնյակի շողերի տակ նիրհող» հրապարակի գեղեցկությամբ, այլ ավելի ռեալ նշանակություն ունեցող հանգամանքներով, որոնք թելադրել էին ռուսական իշխանության այդ կետի վրա կանգ առնելու թե՛ կայազորի և թե՛ կենտրոնացվող գավառի վարչական մարմինների տեղավորման համար։ Արդեն ռուսական տիրապետության հաստատվելուց առաջ, Գորիսը սկսել էր բարձրանալ որպես կարևոր ճանապարհների հանգույց։ Այդտեղով, ինչպես և այսօր արևմուտքից-արևելք ուղղությամբ, Նախիջևանից Սիսիանի (Բիչենաղի լեռնանցքով) և Հայոց ձորից (Դարալագյազից) Որոտանի (Քոչբեկի) լեռնանցքով անցնում է ճանապարհը, ապա Շահի-յոլով Մուղանի դաշտը դուրս գալու համար։ Խորին հնությունից այդ ճանապարհով տեղափոխվում էր Նախիջևանի քարե աղը։ Այս աղի ճանապարհը հատված էր այս կետում հարավից-հյուսիս ձգվող այլ ճանապարհով, որը գալիս էր Մեղրուց Տաշտունու (Դիբագլուի) լեռնանցքով և Ագուլիս Օրդուբադից Կապուտջուղի լեռնանցքով միանում էր Փիրգոուդանի Ողջի (Օխչի) գյուղի տակ՝ փոխադրվում էր Գետաթաղի վրայով (Բաղաբերդի մոտով) և Կյամբիլ լեռան ստորոտով հասնում էր Տաթև, իսկ այնտեղից շարունակվում էր Սատանի կամրջով Որոտնա գետի մյուս ափը անցնելու համար։ Ճանապարհը Հալիձոր-Շինուհայրի (Շնեհերի) գյուղերի վերևով Եռաբլրի (Ուչթափալարի) սարահարթով բերում էր Գորիս և այնտեղից տանում Մուղան, իսկ Ղարաբաղի խանության հիմնվելուց հետո՝ Փանահ խանի օրից, Թթու ջրի լեռնանցքով այժմյան Լեռնային Ղարաբաղը և խանանիստ Շուշի Ղալան (ամրոցը)։ Այս հարավային ճանապարհն առանձնապես կարևորություն ստացավ XIV դ. կեսերին։ Նրանով Պարսկաստանի և Հնդկաստանի ապրանք-